Ռուզան ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

ՀՊՏՀ ասպիրանտ

2014 թ. ավարտել է ՀՊՏՀ-ն և ընդունվել ասպիրանտուրա: 2018 թ. աշխատում է «Ամբերդ» հետազոտական կենտրոնում, միաժամանակ՝ սովորում Texas A&M համալսարանի Ագրոբիզնեսի մագիստրատուրայում: Վերապատրաստումներ է անցել աշխարհի տարբեր երկրների համալսարաններում:

ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԸ ԽԱՐԽԼԵԼ Է ԵՎՐԱՄԻՈՒԹՅԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Երբ Եվրոպան ամենից շատ կարիք ուներ առաջնորդվելու «բոլորը մեկի համար» ոգով, շատերը որդեգրեցին «միայն ինձ համար» սկզբունքը: Երբ Եվրոպան իրոք կարիք ուներ ապացուցելու, որ սա պարզապես միայն «պայծառ եղանակի ժամանակ գործող միություն» չէ, շատերը հրաժարվեցին կիսել իրենց հովանոցը[1]:

Ուրսուլա ֆոն դեր Լեյն
Եվրահանձնաժողովի նախագահ

Հիմնաբառեր. *կորոնավիրուս, ԵՄ, միասնականություն, ճգնաժամ, պարտք*

COVID-19 վիրուսը «փորձարկում» է ԵՄ «ամրությունը»: Փակ են ոչ միայն ԵՄ արտաքին, այլև Շենգենյան տարածքում մի շարք երկրների ներքին սահմանները: ԵՄ անդամ երկրները սկզբնական շրջանում չկարողացան համախմբվել, և դեռ որոշներն էլ արգելեցին կենսական նշանակության բժշկական պարագաների արտահանման իրականացումը: Ու թեև ԵՄ-ն արդեն կատարել է որոշ քայլեր՝ պարտք ներգրավելու կանոնների մեղմացում, ավելի ազատական ծախսման հնարավորություն, Եվրոպական կենտրոնական բանկի կողմից 870 մլրդ եվրոյի պարտատոմս գնելու նախաձեռնություն, այդուհանդերձ, մի շարք հարցերում դեռևս չկա համաձայնություն, դեռևս օդում կախված է մնում «կորոնաբոնդերի» թողարկման խնդիրը: Եվրոպան, թերևս, կհաղթահարի այս ճգնաժամը, ինչը, սակայն, ևս մեկ «ճաք» կավելացնի եվրագոտու ճգնաժամի, միգրացիոն ճգնաժամի և բրեքսիթի հետևանքով առաջացած «ճաքերի» կողքին:

Համամարդկային մարտահրավեր դարձած կորոնավիրուսը սպառնալիք է ոչ միայն առողջության և կյանքի, այլև տնտեսական աճի, ֆինանսական համակարգի կայունության և, նույնիսկ, տասնամյակներով գործող Եվրամիության միասնականության պահպանման համար:

1995 թ. Շենգենյան համաձայնագրի ստորագրումից ի

[1] Speech by President von der Leyen at the European Parliament Plenary on the European coordinated response to the COVID-19 outbreak: https://ec.europa.eu/commission/presscorner/detail/en/speech_20_532

վեր՝ եվրոպական մի շարք երկրների միջև վերացել են սահմաններն ու սահմանային անցակետերի ստուգումները: Արդյունքում՝ անգամ ցամաքային ճանապարհով մի երկրից մյուսը գնալիս հնարավոր է նաև չնկատել, թե երբ, օրինակ, Իտալիայից մուտք գործեցիր Շվեյցարիա (թեև վերջինս նույնիսկ ԵՄ անդամ չէ), կամ որտեղ վերջացավ մի երկրի սահմանը և սկիզբ առավ մյուսինը: Սակայն, 2020 թվականի մարտի 26-ը՝ Շենգենյան համաձայնագրի 25-րդ տարեդարձի օրը, Շենգենյան գոտու երկրները նշեցին փակ սահմանների կամ խստացված անցագրային ստուգումների պայմաններում: Իհարկե, համաձայնագիրը որոշակի դեպքերում երկրներին հնարավորություն է տալիս որոշումներ կայացնելու սեփական սահմանների վերաբերյալ, որն ակնհայտ դարձավ 2015 թ. միգրացիոն ճգնաժամից և իսլամական ահաբեկչությունից հետո, երբ, օրինակ, ֆրանսիական օդանավակայաններում խստացվեցին ստուգումները: Հենց այդ ժամանակահատվածում էլ սկսվեցին շրջանառվել խոսակցություններ այն մասին, որ Շենգենյան համաձայնագիրը վտանգված է, մինչդեռ Եվրոպական խորհրդի նախագահ Դոնալդ Թուսկը դա բնորոշեց որպես պայքար ժամանակի դեմ՝ հանուն Շենգենյան համաձայնագրի փրկության[2]:

Այժմ էլ կորոնավիրուսն է «փորձարկում» ԵՄ «ամրությունը»: Մասնավորապես՝ Շենգենյան համաձայնագրի անդամ մի շարք երկրներ դադարեցրել են երրորդ երկրների հետ ուղևորափոխադրումները, միակողմանիորեն փակել սեփական սահմանները, ինչը, գուցե, միասնական համաեվրոպական արձագանքի հապաղման կամ դրա արդյունավետության հանդեպ թերահավատության արդյունք է: Վերջինիս մասին են վկայում կառավարությունների մակարդակով արված ակնարկները: Այսպես՝ Չեխիայի վարչապետ Անդրեյ Բաբիսը վերջերս իր հայտարարություններից մեկում նշել էր, որ Բրյուսելից խորհուրդների սպասելու կարիք չկա[3]: Իսկ սա ոչ այլ ինչ է, քան Միության հանդեպ վստահության պակաս:

COVID-19 վիրուսը դեռևս շարունակում է սպառնալ թե՛ Եվրոպային, թե՛ ամբողջ աշխարհին, և առայժմ հայտնի չէ, թե այդ սպառնալիքի վերացումից հետո արդյո՞ք Եվրոպան կվերադառնա նախկին վիճակին, թե՞ ոչ: 31.03.2020 թվականի դրությամբ փակ է ԵՄ 26 երկրից 21-ի սահմանը, այսինքն՝ համավարակն արդեն իսկ հարվածել է ԵՄ չորս հիմնասյուներից մեկին՝ ազատ տեղաշարժի իրավունքին: Մի կողմից՝ սա արտակարգ իրավիճակ է. վարակի տարածումը կանխելու համար հայտարարվում է կարանտին, և փակվում են ոչ միայն պետությունների արտաքին սահմանները, այլև երբեմն՝ պետությունների ներսում առանձին քաղաքների կամ նահանգների: Եվ, այս համատեքստում, ԵՄ ներսում սահմանների փակումն այդքան էլ սարսափեցնող չի թվում: Բայց մյուս կողմից՝ նույնիսկ ԵՄ առաջատար երկրի՝ Գերմանիայի կանցլերը լիովին վստահ չէ, որ համավարակի հաղթահարումից հետո սահմանային ստուգումները կրկին կվերացվեն[4]: Ինչ վերաբերում է համերաշխությանն ու համակարգվածությանը, ապա վերջին օրերին այս հասկացությունները ևս «ցույց տվեցին իրենց դեմքը»: Երբ Իտալիան, որպես Եվրոպայում համաճարակի էպիկենտրոն, ակնկալում էր ԵՄ հարևան երկրների օգնությունը, վերջիններս հապաղեցին դա ցուցաբերել և անհաղորդ մնացին ԵՄ-ում Իտալիայի խորհրդարանի մշտական ներկայացուցիչ Մաուրիսիո Մասարիի խնդրանքներին: Ավելին, Ֆրանսիան և Գերմանիան արգելեցին բժշկական պարագաների արտահանումն իրենց

[2] Migration summit: "We are in a race against time to save Schengen", Tusk, 2015 November 12, Times Malta: https://timesofmalta.com/articles/view/watch-valletta-summit-concluding-press-conference.591885
[3] EU to ban most foreign travellers for 30 days to curb virus, 2020, March 17, CVT News: https://www.ctvnews.ca/health/coronavirus/eu-to-ban-most-foreign-travellers-for-30-days-to-curb-virus-1.4856120
[4] EU to Ban Most Foreign Travelers for 30 Days to Curb Virus, 2020, March 17, New York Times: https://www.nytimes.com/aponline/2020/03/17/world/europe/ap-eu-virus-outbreak-europe.html

երկրներից՝ այդպիսով խարխլելով միասնական շուկայի գոյությունը: Այս պահը ֆորսմաժորային է, սակայն ապրանքների տեղաշարժի նման սահմանափակումները կարող են սկիզբ լինել հետագայում նույնպես այսպիսի մոտեցման կիրառման համար: Որքան էլ զարմանալի է, օրհասական պահին Իտալիային առաջինն օգնության ձեռք մեկնեց Չինաստանը, ոչ թե Միության անդամ որևէ երկիր: Իհարկե, քննադատությունների մեծ ալիքից հետո Գերմանիան, Ֆրանսիան և Ավստրիան դիմակներ ուղարկեցին Իտալիա[5], սակայն նրանց սկզբնական լռությունն իտալացիները գուցե դեռ երկար հիշեն: Եվ պատահական չէ, որ լրատվական գործակալություններից մեկի՝ մարտի 13-ին կատարած հարցման արդյունքներով, իտալացիների 67%-ը բացասական է գնահատել ԵՄ անդամակցությունը[6], այն դեպքում, երբ 2018 թ. նոյեմբերին դեռևս 47%-ն էր այդ կարծիքին:

Բացի առողջապահական խնդիրների շուրջ միասնականության բացակայությունից, ԵՄ անդամ երկրները համախմբված չեն նաև տնտեսության վրա համավարակի հետևանքների վերացման հարցում: Մասնավորապես՝ Իտալիայի վարչապետն ամեն կերպ փորձում է առաջ քաշել համատեղ, այսպես կոչված՝ «կորոնաբոնդերի» թողարկման հարցը, որը հնարավորություն կտա ոչ այդքան հարուստ եվրոպական երկրներին էժան վարկային միջոցներ ներգրավելու անդամ՝ ավելի հարուստ երկրների մասնակցության, հետևաբար՝ երաշխավորության շնորհիվ: Սակայն, ինչպես իրավացիորեն նշել է ԵՄ գործիչներից մեկը, «իրական եվրապարտատոմսը (այստեղ միասնական իմաստ ունի) Լոխ-Նեսի հրեշն է՝ նրան ոչ ոք չի տեսել, և այն դեռ սեղանին չէ»[7]: Ընդհանուր առմամբ, համատեղ պարտքի թողարկմանը կողմ է 9 երկիր, այդ թվում՝ Ֆրանսիան և Իսպանիան, այսինքն՝ այն երկրները, որոնք ամենաշատն են տուժել համավարակից: Սակայն, կորոնաբոնդերի թողարկմանը դեմ են, այսպես կոչված, «երաշխավոր» երկրները՝ հանձինս Գերմանիայի, Ավստրիայի, Նիդեռլանդների և Ֆինլանդիայի, որոնց ներգրավվածության հաշվին էլ պիտի իջներ փոխառության տոկոսը: Միաժամանակ, Գերմանիայի կանցլերը կողմ է ԵՄ կայունացնող կառուցակարգի (European Stability Mechanism) գործակալությանն ապավինելուն, որի միջոցով համավարակից ամենաշատ տուժած երկրներին իրենց ՀՆԱ 2%-ի չափով փոխառություն վերցնելու հնարավորություն է տրվել: Սակայն, մարտի 26-ի տեսահամաժողովի ժամանակ ԵՄ առաջնորդներն այդպես էլ չկարողացան համաձայության գալ տնտեսություններին օժանդակող փաթեթների չափի վերաբերալ, փոխարենը՝ ֆինանսների նախարարներին հանձնարարվեց 2 շաբաթում մանրամասների վերաբերյալ պայմանավորվածություն ձեռք բերել: Սա ևս մեկ ապացույց է, որ COVID-19 վիրուսը «ճեղքեր է» առաջացնում Միության ներսում, թեև որոշ դրական տեղաշարժեր արդեն կան: Մասնավորապես՝ Եվրոպական հանձնաժողովը հաստատել է 37 մլրդ եվրոյի ֆինանսավորման մասին ծրագիրը՝ ուղղված փոքր բիզնեսի և առողջապահական ոլորտի իրացվելիության ապահովմանը[8]: Բացի այդ, տնտեսությունները փրկելու նկատառումով կասեցվել են պետական փոխառության համար սահմանվող կանոններն ու սահմանափակումները[9], Եվրոպական կենտրոնական բանկը նախաձեռնել է «Համավարակի արտակարգ արձագանքման գնումների ծրագիր» (Pandemic Emergency Purchase Pro-

[6] Whatever it takes: Italy and the Covid-19 crisis, 2020, March 18, The European Council on Foreign Relations think thank: https://www.ecfr.eu/article/commentary_whatever_it_takes_italy_and_covid_19_crisis

[7] EU Coronavirus summit exposes fundamental divisions, 2020, March 27, Globalvision: https://globalvisionuk.com/eu-coronavirus-summit-exposes-fundamental-divisions/

[8] Flexibility under the EU's Fiscal Rules, 2020, March 13, European Commission: https://ec.europa.eu/info/live-work-travel-eu/health/coronavirus-response/economy_en

[9] COVID-19: Commission sets out European coordinated response to counter the economic impact of the Coronavirus*, 2020 March 13, European Commission: https://ec.europa.eu/commission/presscorner/detail/en/ip_20_459

gramme), որը 750 մլրդ եվրո ծավալով պարտատոմսերի գնում է նախատեսում, ի լրումն դրանից առաջ հայտարարված 120 մլրդ եվրոյի, որոնք միասին կազմում են ԵՄ ՀՆԱ-ի 7.5%-ը[10]: Սա աննախադեպ է իր ծավալով և դեռ ամբողջական փաթեթը չէ:

Ապրիլի 2-ին հայտարարվեց նաև 100 մլրդ եվրո ծավալով ծրագրի գործարկման մասին, որը 25 մլրդ եվրոյի չափով կամավորության սկզբունքով երաշխավորված լինելով ԵՄ անդամների կողմից, նախատեսում է վարկավորման միջոցով ֆինանսավորել աշխատողների ժամանակավոր անգործությունը կամ կրճատված աշխատաժամանակը՝ ամրացնելով անդամ պետությունների կարճաժամկետ աշխատանքային սխեմաները և մեղմելով ճգնաժամի հետևանքով առաջացած գործազրկության ռիսկերը[11]: Իսկ արդեն ապրիլի 3-ին Եվրահանձնաժողովի նախագահը հայտարատեց երրորդ երկրներից բժշկական սարքավորումների և պաշտպանող միջոցների ներմուծման մասատուրքերի և ԱԱՀ-ի ժամանակավոր (6 ամիս՝ հետագա երկարացման հնարավորությամբ) վերացման մասին[12]: Արդյունքում օրինակ Իտալիայում Չինաստանից ներմուծված բժշկական դիմակների և հագուստի համար գանձվող 12% մաքսատուրքը և 22% ԱԱՀ-ն չեն գանձվի՝ նպաստելով տվյալ ապրանքների ավելի քան մեկ երրորդով էժանացմանը, իսկ օդափոխիչների գինը միջինում կիջնի 20%-ով:

Այսպիսով՝ կարող ենք եզրակացնել, որ ԵՄ-ն, թեև հապաղում, բայց գործում է: Եվ հայտարարել, թե սա ԵՄ վախճանն է՝ ճիշտ չի լինի: Բայց այն, որ համավարակի ժամանակ ԵՄ սկզբնական գործունեությունը, ավելի ճիշտ՝ անգործությունը քննադատության էր արժանի, վկայեցին ոչ միայն հակաեվրոպական ուղղության ջատագովները, այլև հենց ԵՄ ներկայացուցիչները և մի շարք անդամ պետությունների ղեկավարներ:

Եվրոպան, թերևս, կհաղթահարի այս ճգնաժամը, ինչը, սակայն, ևս մեկ «ճաք» կավելացնի եվրագոտու ճգնաժամի, միգրացիոն ճգնաժամի և բրեքսիթի հետևանքով առաջացած «ճաքերի» կողքին: Ընդ որում, տարբեր հարցերի վերաբերյալ դեռևս պահպանվում են մի շարք անհամաձայնություններ: Եվ եթե միասնական եվրոպական պարտատոմսն այդպես էլ չթողարկվի, գուցե սա սկիզբը լինի արդեն իսկ շրջանառվող՝ Itexit-ի շուրջ խոսակցությունների և ցրամադրությունների խանդավառման:

[10] Our response to the coronavirus emergency, Christine Lagarde, President of the ECB, 2020 March 19, European Central Bank,https://www.ecb.europa.eu/press/blog/date/2020/html/ecb.blog200319~11f421e25e.en.html
[11] SURE Supporting Member States to Help Protect People in Work and Jobs, European Commission, 2020, April 2, https://ec.europa.eu/info/sites/info/files/economy-finance/sure_factsheet.pdf
[12] Coronavirus: Commission waives customs duties and VAT on the import of medical equipment from non-EU countries, European Commission, 2020, April 3, https://ec.europa.eu/commission/presscorner/detail/en/ip_20_575

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. COVID-19: Commission sets out European coordinated response to counter the economic impact of the Coronavirus*, 2020, March 13, European Commission: https://ec.europa.eu/commission/presscorner/detail/en/ip_20_459
2. EU to ban most foreign travellers for 30 days to curb virus, 2020, March 17, New York Times: https://www.nytimes.com/aponline/2020/03/17/world/europe/ap-eu-virus-outbreak-europe.html
3. EU Coronavirus summit exposes fundamental divisions, 2020, March 27, Globalvision: https://globalvisionuk.com/eu-coronavirus-summit-exposes-fundamental-divisions/
4. Flexibility under the EU's Fiscal Rules, 2020, March 13, European Commission: https://ec.europa.eu/info/live-work-travel-eu/health/coronavirus-response/economy_en
5. Migration summit: "We are in a race against time to save Schengen", Tusk, 2015, November 12, Times Malta: https://timesofmalta.com/articles/view/watch-valletta-summit-concluding-press-conference.591885
6. More French COVID-19 patients flown to

Germany and Switzerland, 2020, March 29, Euronews: https://www.euronews.com/2020/03/28/eight-covid-19-patients-flown-from-france-and-italy-to-german-hospitals
7. Our response to the coronavirus emergency, Christine Lagarde, President of the ECB, 2020, March 19, European Central Bank: https://www.ecb.europa.eu/press/blog/date/2020/html/ecb.blog200319~11f421e25e.en.html
8. Whatever it takes: Italy and the Covid-19 crisis, 2020, March 18, The European Council on Foreign Relations think thank: https://www.ecfr.eu/article/commentary_whatever_it_takes_italy_and_covid_19_crisis
9. Speech by President von der Leyen at the European Parliament Plenary on the European coordinated response to the COVID-19 outbreak: https://ec.europa.eu/commission/presscorner/detail/en/speech_20_532

Рузанна ТАДЕВОСЯН
Младший исследователь
исследовательского центра «Амберд», АГЭУ,
аспирант АГЭУ

КОРОНАВИРУС ПОДОРВАЛ ЕДИНСТВО ЕВРОПЕЙСКОГО СОЮЗА

Коронавирус «проверяет» ЕС на «прочность». Закрыты не только внешние границы, но и границы ряда стран внутри Шенгенской территории. Страны-члены ЕС изначально не смогли объединиться, более того, некоторые страны запретили экспорт жизненно важных медицинских изделий. И хотя ЕС уже были предприняты некоторые шаги - смягчение правил привлечения долга, возможность более свободного расходования, инициатива закупки облигаций Европейским центральным банком на 870 млрд евро, однако по ряду вопросов не достигнут консенсус, все еще висит в воздухе выпуск «коронабондов». Этот кризис, вероятно, будет преодолен Европой, но это добавит еще одну трещину к трещинам, вызванным кризисом еврозоны, миграционным кризисом и брекситом.

Ключевые слова: *коронавирус, ЕС, единство, кризис, долг*

Ruzanna TADEVOSYAN
Junior researcher at
AMBERD Research Center, ASUE,
PhD student at ASUE

CORONAVIRUS HAS UNDERMINED THE UNITY OF THE EUROPEAN UNION

Coronavirus tests the EU resilience. Both external and many internal borders are closed in Schengen area. The EU countries initially failed to consolidate, and moreover some countries banned vital medical equipment's export. Even though the EU has already done something, such as suspending the rules of public depth, initiating emergency bonds buying program with an entire budget of 870bn euro, but there are still some issues that are not agreed by everyone, still there is no consensus regarding to "coronabonds". Probably the EU will overcome this crisis, but this will add one more crack to the cracks caused by euro crisis, migration crisis and Brexit.

Keywords: *coronavirus, EU, unity, crisis, debt*